

«Սովետական Հայաստանի սոցիալիզմի հաղթանակի և Ստալինյան Գոնաթիտուցիայի մամանակաշրջանում» բաժնում անհրաժեշտ չափով ցույց չի տրվել 1935—41 թթ. կապիտալիստական երկրների ճգնաժամի առանձնահատկությունները:

«Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսությամբ վերականգնման շրջանում» բաժնում թույլ է լուսարանված զստակարգային պայքարը երկրում՝ ժողովրդական տնտեսության վերականգնման և խաղաղ աշխատանքների անցնելու մամանակաշրջանում: «Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում» բաժնում թիշ են և անհամոզիչ այն փաստերը, որոնք օպոստուցում են, որ զաշնակցությունը եղել է միջազգային խնդիրայիղմի և սուսական կոնտրակտուցիոն ուժերի գործակալ Անրազարտը է լուսարանված 1920 թ. թուրքերի 2-րդ արշավանքը Հայաստանի դեմ:

Այնչ չի սոված էշեզոր գոտու և նրա ազատագրությունը համար բոլշևիկների մյած պայքարի մասին: Թույլ է լուսարանված Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը:

Այդ բաժնում գյուղացիների պայքարը գուրս է բերվում որպես պայքար միայն հողի համար, մինչդեռ գյուղացիները ոչ միայն հողի համար էին պայքարում, այլև իրենց իրավունքների համար: Առկա Առկասյանի մասին խոսելիս չի տրվում նրա սեուուցիոն գործունեությունը:

«Սովետական Հայաստանը երկրի ինդուստրացման համար մզվող պայքարում» բաժնում լավ չի վեր հանված 14-րդ և 15-րդ պարտիական համագումարների դերը որպես ինդուստրացման և կոնեկտիվացման համագումարներ: Հեղինակը, կանգ առնելով էենինի հոսպերատիվ պլանի վրա, չի խոսում ընկեր Ստալինի ցուցումների մասին՝ արտելային ձեի վերարբայալ, որը բխում է ընկեր էենինի հոսպերատիվ պլանից:

Բայր բաժիններում էլ անհրաժեշտ չափով խոսվում է էկոնոմիկային վերարբող հարցերի մասին, բայց կան թվական տվյալներ—տնտեսագիտական տերմինների սխալներ, որոնց վերացումը անհրաժեշտ է: Բաժինների մեջ կապը թույլ է:

Ինդուստրացման առանձնահատկությունները մասին խոսելիս «Սովետական Հայաստանը երկրի ինդուստրացման համար մզվող պայքարում» բաժնում չի նշվում, որ Հայաստանում կային ինդուստրացման համար նպաստավոր պայմաններ: «Սովետական Հայաստանը՝ ժողովրդական տնտեսությամբ վերականգնման մամանակաշրջանում» բաժնում հենց սկզբից սոված է, որ Հայաստանը չէր կարող այլ բաղադրականություն կիրառել, քան սովածական կոմունիզմի բաղադրականություն: Այստեղ չի հիմնավորվում սովածական կոմունիզմի անհրաժեշտությունը և առանձնահատկությունները Հայկական ՍՍԽ-ում:

Մանարկման մամանակ նշվեցին նաև տեխնիկական կարգի բաղմամիվ սխալներ ու վրիպակներ, որոնց վերացումը, գրքի վերամշակման մամանակ անհրաժեշտ է:

Պատմություն ինստիտուտի գիտական խորհուրդը և էլույթ ունեցող ընկերները համարություն տվեցին «Սովետական Հայաստանի պատմության ուրվագծերը» կոնեկտիվ աշխատությունը և անհրաժեշտ գտան աշխատությունն առանձին գրքով հրատարակել:

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Հոկտեմբերի 28-ին կայացավ Հայկական ՍՍԽ Գիտությունների Ակադեմիայի Մ. Արեգյանի անվան Իրականության ինստիտուտի Գիտական խորհրդի նիստը:

Լսվեց Իրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, Ֆիլոսոֆիական գիտությունների թեկնածու ընկ. Գ Մտեփանյանի հազորդումը, Մ. Նալբանդյանի բարձր գնահատման արժանացած «Աղապի հիքեանսի» վեպի հայտնարերման, նրա հեղինակի ճշման և վեպի գրականագիտական արժեքի մասին:

Մ. Նալբանդյանը իր «Ոս և Վարդիթերի» կրիտիկայի մեջ խոսելով հայ գրականության սկզբնավորման մասին, հիշատակում է Յ. Արուսյանի «Վերջ Հայաստանի», Տեր-Նովանիսյանի «Տեր Եարգիս» երկերը ու «Աղապի հիքեանսի» անունով մի անծանոթ վեպ, որը լույս է տեսել Պոլսում 1831 թ., գրված հայ հեղինակի կողմից, հայերեն տառերով, բայց թուրքերեն լեզվով: Նալբանդյանը այդ վեպը բարձր է գնահատում, այն համարում է «Հայոց կյանքից լիսած մի շատ կենդանի և շատ սրտաշարժ գործ», «աղղա-

յին վիպասանութիւն», որի մեջ «ընականութիւնը և արվեստը իրար հետ լծորդված են»։ Այդ վեպը, — ասում է Նալբանդյանը, — «արվեստի կողմից կարող է դիմանալ խիստ քննութիւն», և իր ռեալիզմով ու հոգեբանական խորութեամբ «շատ բարձր է եվրոպական ամենավեր վիպասանութիւններից»։

Հառկանալի է, որ այսպիսի գնահատման արժանացած մի վեպ գրավելու էր Նալբանդյանով գրադպող գիտնականների ուշադրութիւնը, սակայն նրանց մոտ 15 տարիների որոնումները — կամ վեպը կամ նրա մասին որևէ ընդարձակ հոդված գտնելու ուղղութիւնը, — անցել էին ապարդյուն։ Այնպես էլ առեղծված էր մնացել, թե ինչ է իրենից ներկայացնում Նիշյալ վեպը, ինչ հարցեր են արծարծված այնտեղ, և, վերջապես, ով է նրա հեղինակը։

Ընկ. Բ. Ստեփանյանը երկար պրպտումից հետո կարողացել է նախ որոշել, թե ով է վեպի հեղինակը (Հովսեփ Վարդանյան) ապա հանդիպել է նաև մի շարք տեղեկութիւններին՝ վեպի հրատարակման հանգամանքների, նրա առաջին գնահատումների մասին։ Այս տարվա սեպտեմբեր ամսին Մոսկվայից ՎՈՒՍ-ի միջոցով ստացվել է «Ազապի հիքեաեսի» վեպի ֆոտոպլյոնկան, որը և հնարավորութիւն է տվել արդեն ձեռքի տակ ունենալու այդ հազվագյուտ ու թանկարժեք գրքի տեքստը։

Ընկ. Ստեփանյանի հաղորդումը գրքի բովանդակութեան, նրանում արծարծված հարցերի ու վեպի գեղարվեստական արժեքի մասին, լիովին հաստատում է այն ֆրամ գնահատականը, որ տվել է ռուսացի ռեմոկրատ Միքայել Նալբանդյանը իր գաղափարական ամենահասուն շրջանում։ Վեպը ուշագրավ երևույթ է 50—60-ական թվականների շայ գրականութեան մեջ և իր ռեալիստական արվեստով ու գաղափարական բովանդակութեամբ այսօր էլ կարող է մեծ հետաքրքրութեամբ ընթերցվել, բացի այն, որ ունի դրականագիտական-բանասիրական հսկայական նշանակութիւն։

Վերջում ընկ. Ստեփանյանը կարգաց վեպի առաջին գլուխն իր թարգմանութեամբ։

Հաղորդումից հետո ելույթ ունեցան պրոֆ. Մ. Մկրյանը, պրոֆ. Ն. Մելիքյանը, ընկ. ընկ. Աս. Ասատրյանը, Խ. Սարգսյանը, արձակագիր Արաղին, որոնք ողջունեցին ընկ. Ստեփանյանի հետեղական հետաքրքրութիւնը վեպը հայտնաբերելու ուղղութեամբ և նշեցին, որ «Ազապի հիքեաեսի» գրքի հայտնաբերումը և նրա հեղինակի հարցի լուծումը խոշոր ներդրում է Նալբանդյանագիտութեան մեջ, հետևաբար գրքի հրատարակութիւնը 1951 թվականին՝ վեպի հրատարակման հարյուրամյակի օրերին, ոչ միայն կնպաստի Նալբանդյանագիտութեանը, այլև կլինի մեծ ունեցւածի ղեմակերպութիւն մոտ մեկ դար առաջ հայտնած ցանկութեան կենսագործումը մեր օրերում։ Նալբանդյանը բանտում, իր կյանքի վերջին օրերին Նիշյալ վեպի մասին գրել է. «Երանի թե մեկ օր հայերեն կարդայինք այդ հոյակապ և ազնիվ գործը»։

Գիտական խորհուրդը որոշեց 1951 թվականին ակադեմիական հրատարակութեամբ լույս րնծայել «Ազապի հիքեաեսի» վեպը։

Գիտական խորհուրդը նույն նիստում քննութեան առավ և հաստատեց Գրականութեան ինստիտուտի 1951 թվականի գիտա-հետազոտական սլանները։

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ